ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մարտ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-մարտին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 112.2%, 2022թ. հունվար-մարտին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109,7 %, իսկ 2021թ. հունվար-մարտին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109,6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 556 մլրդ 545.8 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5 մլրդ 823.7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 86 մլրդ 134.2 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 64 մլրդ 827.4 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 8 մլրդ 870.3 մլն և 16 մլրդ 048.8 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 1 տրիլիոն մլրդ 7 մլրդ 879.8 մլն դրամ 2022 և 2021 թվականների նույն ժամանակա շրջանների համեմատությամբ ավել է համապատաս խանաբար 226 մլրդ 730,7 մլն և 343 մլրդ 106,8 մլն. դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-մարտին կազմել է 675 մլրդ 205.1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 171 մլրդ 994,4 մլն և 271մլրդ 226,1 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 103.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.1%-ի և 96.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 115.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.2%-ի և 104.7-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 121%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույ ն ժամանակաշրջանների 107.6%-ի և 99.4%-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 122.9%, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 122.2%-ի և 91.9%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-մարտին կազմել է 116 մլրդ 216.1 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 28.5 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 13.2 մլրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 339 մլրդ 674.9 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 35.9 և 81.6 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 940 մլրդ 36.3 մլն դրամ, ինչը 2022թ.ցուցանիշից պակաս է 2.3 մլրդ դրամով և 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 16.2 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 6 մլրդ 618.5 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 793.4 մլն և 1 մլրդ 600.8 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտին նկատմամբ կազմել է 96.8%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 87.1%-ի և 108.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 108.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.9%-ի և 88.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմաբ կազմել է 99.3%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.3%-ի և 111.2%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 109.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.7%-ի և 100.%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 64 մլրդ 345.6 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ, 862 մլն և 2 մլրդ 369.9 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 142 մլրդ 923.4 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 50,4 և 68.6 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մարտին կազմել է 185 մլրդ 919.5 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 50.6 և 70.6 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 102.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.9%-ի և 63.9%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 154,3%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 124.5% և 112.8%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մարտին 2022թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 118.5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.1%-ի և 101.5%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. մարտին 2022թ. մարտի նկատմամբ կազմել է 107.2%, 2022թ. մարտին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.0%, 2021թ. մարտին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.2%: ՍԳԻ-ն 2023թ.մարտին 2022թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.8%, 2022թ. մարտին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 103.5%, 2021թ. մարտին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 103.8%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 126 մլրդ 32 մլն դրամ, ինչը 74 մլրդ 263 մլն դրամով կամ 7.2%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 152 մլրդ 354 մլն դրամով կամ 12%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 66233 մարդ, ինչը 16252 մարդով կամ 19.7%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 24335 մարդով կամ 26.9%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. մարտի դրությամբ կազմել է 47281 մարդ, ինչը 9223 մարդով կամ 16%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 15718 մարդով կամ 25.0%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-մարտին կազմել է 4մլրդ 248.1 մլն. դոլար, ինչը 2 մլրդ 1147.9 մլն դոլարով կամ 102.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 733.4 մլն. դոլարով 180.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2023թ. մարտին կազմել է -918.5 մլն դոլար, ինչը 287.4 մլն. դոլարով կամ 45.5%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 557.0 մլն դոլարով կամ 254.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. մարտին կազմել է 1664.8 մլն դոլար, ինչը 929.8 մլն. դոլարով կամ 126.5%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 88.2 մլն դոլարով կամ 188.7%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. մարտին կազմել է 2 մլրդ 583,3 մլն դոլար, ինչը 1 մլրդ 217.2 մլն. դոլարով կամ 89.1%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 645.2 մլն դոլարով կամ 175.3%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-մարտին կազմել է 261495 դրամ, ինչը 34322 դրամով կամ 15.1 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 63438 դրամով կամ 32 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 60,920.9 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -139.9 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -60,781.0 մլն դրամ: 2022թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 28,674.6 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -6,443.3 և -22,231.1 մլն դրամ: 2021թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -55,607.8 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -272,235.6 և 327,843.4 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ